

նատան որ առաջի դրան եկեղեցւոյն սան ճիւղս-  
թօի:

Ես Հ. Կովտաս Կարապետեան վար-  
դապետ Մխիթարեան եւ եկեղեցւոյն  
Հաստատեմ:

Ասկէ յայտնի է որ Կր. Պատրիարք  
1789էն ետեւ Թրիեստ փոխադրուած եւ այն-  
տեղ վախճանած է 22 Յունիս 1791ին:

Ես նոյն 1895 տարին գացի S. Giusto  
եկեղեցին, այս գերեզմանը փնտռելու, սակայն  
եկեղեցւոյն շուրջը գերեզմանի հետք չկայ,  
ամենայն ինչ վերցուած, յարգարուած եւ քա-  
ղաքին կենդրոնական գերեզմանոցը փոխադրուած  
է: Սակայն այն տեղ ալ չկրցայ գտնել Գրիգոր  
Պատրիարքի յիշեալ տապանագիրը, ինչպէս  
նաեւ իմ խնդրանօքս այս օրերս մեր Միաբան-  
ներէն մէկը փնտռեց գերեզմանատան մէջ  
եւ չգտաւ: —



Գրիգոր Պատրիարքին կնիքին նմանահա-  
նու թիւնը հօս կը դնեմ. մենագիրներուն ըն-  
թերցուածն է «Գրիգոր Վարդապետ Պատ-  
րիարք ՌՄԹԳ» (= 1764): Ասիկայ կը գտնուի  
1771 Նոյ. 5 թուականաւ ի Կ.Պոլիս գրուած  
հրամանագրի մը վրայ, որով Պատրիարքը հրա-